Մենք յօժարութեամբ ընդունեցինք: Նա ընկաւ մեր առջեւը, սկսեց տանել դէպի իր տունը:

Մեր ետեւից բարձրացաւ խառնաձայն աղմուկ. լսւում էին այդպիսի յանդիմանական խօսքեր. «ինչո՞ւ խաբեցիր... ինչո՞ւ սուտ խօսեցիր... ինչո՞ւ մեզ ամաչացրիր այդ օտարականների մօտ. սենեակներում գարի ես լցրել եւ ասում ես, թէ փլած են...»:

Երեւում էր, որ տէրտէրին գզգզում էին:

Ես մեր հիւրընկալին նկատեցի.

— Ձեր տէրտէրը ժամասացութիւ՞նն էլ այդպէս ձգձգում է, ինչպէս սենեակների բացատրութիւնը:

— Շատ բառեր կուլ է տալիս, — պատասխանեց նա ժպտալով, — եթէ ամէն խօսք կարդալու լինէր, մենք բոլորովին կորած էինք:

Մենք մտանք մի բաւական կոկիկ տուն, փոքրիկ պարտէզով: Մաքուր, արեւելեան ճաշակով կահաւորած մի սենեակ էր, ուր ներս տարաւ մեզ մեր հիւրընկալը եւ խնդրեց նստել, ասելով.

— Այնպէս համարեցէք, որ ձեր տանն էք, ես իսկոյն կը պատուիրեմ, որ մեզ ուտելու մի բան տան:

Այստեղ, ինչպէս այդ կողմերի բոլոր քաղաքներում, սովորութիւն ունէին կէսօրին՝ ճաշի ժամանակ՝ նախաճաշիկ ուտել, իսկ երեկոյեան ընթրիքի ժամանակ՝ ճաշ ուտել: Որովհետեւ մարդիկ, ամբողջ օրը բազարում զբաղուած լինելով, վերադառնում էին տուն երեկոյեան միայն, ուր սպասում էր նրանց պատրաստի սեղանը:

Ընթրիքից յետոյ մեզ սուրճ տուեցին: Յայտնուեցաւ, որ մեր հիւրընկալը քաղաքի ունեւոր կալուածատէրերից մէկն էր եւ ծխախոտի ընդարձակ մշակութիւն ունէր:

Արփիարը, մի կողմ քաշուած, պառկել էր մինդարի վրայ եւ լուռ ծխում էր: Փափուկ երիտասարդը յոգնած էր երեւում: Մի ամբողջ օր ու գիշեր շարունակ ճանապարհ էր եկել, դա հեշտ չէր նրա համար: Ասլանը ինչ որ նամակ էր որոնում իր թղթապահի մէջ: Իսկ ես դեռ չէի մոռացել մօրուքին, չէի մոռացել եւ հաստափոր տէրտէրին, այդ պատճառով հարցրի մեր հիւրընկալից, թէ այն ի՞նչ աղմուկ էր, որ մեր հեռանալուց յետոյ բարձրացաւ եկեղեցու բակում:

— Արժէ՞ միթէ դրա վրայ խօսել, — պատասխանեց նա՝ ուսերը արհամարհական կերպով շարժելով. — մեր տէրտէրները խօ գիտէք ի՞նչ են...